

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

դասընթացի ծրագիր

Դասիչ՝ 1802/M08

Կիսամյակ՝ 1-ին

Կրեդիտ՝ 3

Ծրագրի բովանդակությունը

1. Համառոտ տվյալներ դասախոսի մասին.....	2
2. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովումը.....	3
3. Դասընթացի նպատակը	4
4. Կրթական վերջնարդյունքները.....	4
5. Դասընթացի ուսումնական քարտեզը.....	5
6. Դասախոսությունների համառոտ բովանդակություն.....	9
Շաբաթներ 1–3	9
Շաբաթներ 4–5	9
Շաբաթներ 6–7	10
Շաբաթներ 8–10.....	10
Շաբաթներ 11–13.....	11
Շաբաթներ 14–16.....	11
7. Լրացուցիչ գրականության ցանկը.....	12
8. Ընթացիկ (միջանկյալ) և եզրափակիչ քննությունների բովանդակությունը և միավորների սանդղակը	13
Առաջին միջանկյալ քննությունը	14
Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝	14
Երկրորդ միջանկյալ քննությունը	16
Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝	16
Եզրափակիչ քննությունը	17
Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝	17

1. Համառոտ տվյալներ դասախոսի մասին

Դասընթացը վարում է՝

բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Շահնազարյանը

Փոստային հասցե՝

Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան,

արևելագիտության

ֆակուլտետ, արաբագիտության ամբիոն

Էլ. փոստի հասցեն՝

shahnazaryanlilit@yahoo.com

Կայքը համացանցում՝

<http://yerevan.academia.edu/LilitShahnazaryan/>

Աշխատանքային հեռախոսը՝

060710582

Անհատական խորհրդատվությունների կազմակերպումը՝

Կոնտակտային՝ դասաժամի օրը, նախնական պայմանավորվածությամբ

Առցանց՝ դասընթացի խմբում Facebook ցանցում

(<http://www.facebook.com/groups/148525638570994/>)

Ակադեմիական կենսագրությանը, դասավանդվող այլ առարկաներին և գիտական հետաքրքրությունների շրջանակին կարելի է ծանոթանալ ԵՊՀ կայքում՝

<http://www.yasu.am/faculties/?view=20005&f=291&id=469>

2. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովումը

Ուսանողներին անհրաժեշտ է գրանցվել դասընթացի խմբում Facebook սոցիալական ցանցում (<http://www.yasu.am/faculties/?view=20005&f=291&id=469>) և լրացնել պահանջվող կոնտակտային տվյալները՝ պլանավորվող ուսումնական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու և փոխանակելու, ինչպես նաև առցանց խորհրդատվություններ ստանալու համար:

3. Դասընթացի նպատակը

«Եբրայագիտության հիմունքներ» դասընթացի բովանդակությունը ներառում է հրեա ժողովրդի պատմության, լեզվի, գրի և մշակույթի, ինչպես նաև այդ գիտակարգերի հետազոտման պատմության հիմնական թեմաները:

Դասընթացի նպատակն է՝

- ծանոթացնել ուսանողներին «Եբրայագիտություն» հասկացության գիտակարգային սահմանների ժամանակակից ընկալումների և գործառական ընդլայնումների հետ,
- դասակարգել հրեա ժողովրդի պատմությանը վերաբերող հարուստ փաստագրական նյութն ըստ թեմաների և խնդիրների՝ փորձելով այն ներկայացնել արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների հետ փոխհարաբերության համատեքստում,
- ներկայացնել ժամանակակից Եբրայագիտության զարգացման հիմնական ուղղություններն ու մոտեցումները՝ պատկերացում տալով որոշ խնդրահարույց հարցերի վերաբերյալ,
- օգնել ուսանողին պատկերացում կազմել հրեա ժողովրդի ինքնագիտակցության ձևավորման և կրոնական ընկալումների վերաբերյալ՝ ուշադրություն դարձնելով նրա անցած զարգացման հիմնական ուղիների վրա:

4. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կցուցաբերի.

4.1. Տեսական գիտելիքներ

- ✓ *ժամանակակից Եբրայագիտության տեսական հենքին և նրա առջև դրված խնդիրներին, հրեա ժողովրդի պատմությանը /սկսած աստվածաշնչյան շրջանից մինչև մեր օրերը/, հուդայականության ձևավորման և զարգացման փուլերին, ինչպես նաև Եբրայերեն լեզվի պատմությանն առնչվող հարցերում:*

4.2. Բուն մասնագիտական գործնական կարողություններ

- ✓ էբրայագիտության բնագավառում վիճահարույց հարցեր հետազոտելու, արդիական մեթոդներին և տեխնիկական գործիքակազմին տիրապետելու գործնական կարողություն.
- ✓ էբրայագիտության ուսումնասիրությունների հիմքում ընկած մեթոդաբանական մոտեցումները և քննարկվող կոնցեպցիաները վերլուծելու, համադրելու և քննադատորեն իմաստավորելու կարողություն:

Դասընթացի ընթացքում կիրականանա նաև ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ ընդհանրական կարողությունների զարգացումը՝

- ✓ մասնագիտական գիտելիքը նորացնելու և փոխանցելու.
- ✓ նոր գաղափարներ առաջ քաշելու.
- ✓ որակի մասին հոգածության
- ✓ թիմում աշխատելու.
- ✓ գնահատման գործիքներ կիրառելու.
- ✓ նախագիծ պլանավորելու, իրականացնելու և պաշտպանելու:

5. Դասընթացի ուսումնական քարտեզը

Թեմատիկ բովանդակության բաշխումն ըստ շաբաթների	Դասավանդման ձևը	Ուսումնառության եղանակը	Գնահատման ձևը
<p><u>Շաբաթ 1</u> Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Առարկայի ներածում:</p>	<p>Ներածական դասախոսություն: Հարց-ու-պատասխան:</p>	<p>Ծրագրի ընթերցում: Հարցերի ձևավորում: Խնդիրների առաջադրում:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր հարցում: Համացանցային քննարկում:</p>
<p><u>Շաբաթ 2</u> Եբրայագիտության</p>	<p>Դասախոսություն</p>	<p>Դասախոսության նյութի և</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ:</p>

առարկան: Եբրայագիտությունը հումանիտար գիտությունների համակարգում:		հանձնարարված գրականության ընթերցում:	Ճեպաթերթիկ: Համացանցային քննարկում:
<u>Շարաթ 3</u> Հին կտակարանը որպես հրեա ժողովրդի պատմության հուշարձան	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ընթերցում: Մասնակցություն լսարանային քննարկմանը:	
<u>Շարաթ 4</u> Հրեա ժողովրդի ճագումնաբանությունն ըստ հնագիտական ուսումնասիրությունների:	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Լսարանային քննարկում: Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ընթերցում: Մասնակցություն լսարանային քննարկմանը:	<u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Ճեպաթերթիկ: Համացանցային քննարկում:
<u>Շարաթ 5</u> Աստվածաշնչյան ժամանակաշրջան:	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ընթերցում: Մասնակցություն լսարանային քննարկմանը:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն: Համացանցային քննարկում:
<u>Շարաթ 6</u> Նախապատրաստում քննական ներկայացումներին և բանավեճին:	Լսարանային աշխատանք: Ներկայացումների հարցադրումների ձևավորում: Ներկայացվելիք գրականության բաշխում:	Մասնակցություն լսարանային աշխատանքին: Քննական ներկայացումների պլանավորում: Հարցերի ձևակերպում: Ինքնագնահատման վարժանք:	<u>Ընթացքի գնահատում</u> Նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների) գնահատում: Հարցադրումների ներկայացում:

<p><u>Շարաթ 7</u> Ետաստվածաշնչյան կամ Երկրորդ տաճարի ժամանակաշրջան: Հուդայականությունը և հելլենիզմը: Մաքաբեական իշխանության հաստատումն Իսրայելում:</p>			<p><u>Վերջնարդյունքի գնահատում</u> Բանավոր ներկայացումների փոխգնահատում:</p>
<p><u>Շարաթ 8</u> Քննության արդյունքների վերլուծություն:</p>	<p>Հետքննական սեմինար:</p>	<p>Քննական արդյունքների ինքնավերլուծություն:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ-վերլուծություն</p>
<p><u>Շարաթ 9</u> Կուրսային նախագծերի պլանավորում:</p>	<p>Լսարանային ներկայացում: Թեմաների ընտրություն:</p>	<p>Առաջադրված թեմաների քննարկում: Խմբերի ձևավորում:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Խմբային աշխատանքի ունակությունների պարզաբանման թեստի լրացում:</p>
<p>Շարաթ 10 Հնագույն Իսրայելի կրոնական պատկերացումներն ի հակադրություն դասական ռաբունական համակարգի: Խմբերի աշխատանքների բովանդակային ուղղորդում:</p>	<p>Մեկնաբանություններ թեմաների բովանդակության շուրջ:</p>	<p>Բովանդակային հարցերի պարզաբանում: Հարցադրումների ներկայացում:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Համացանացային հարցում:</p>
<p><u>Շարաթ 11</u> Խմբերի աշխատանքների բովանդակային ուղղորդում:</p>	<p>Թիմերի աշխատանքի ընթացիկ դիտարկում:</p>	<p>Ընթացիկ հարցադրումներ:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Համացանացային հարցում:</p>
<p><u>Շարաթ 12</u> Խմբերի աշխատանքների բովանդակային</p>	<p>Թիմերի աշխատանքի ընթացիկ դիտարկում:</p>	<p>Թիմերի աշխատանքի ընթացիկ դիտարկում:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Համացանացային հարցում:</p>

ուղղորդում:			
<u>Շարաթ 13</u> Հրեական խորհրդապաշտություն: Կաբալան հրեական կրոնական ավանդույթի համատեքստում: Հրեական լուսավորչական շարժման ծագումն ու ձևավորումը Արևելյան Եվրոպայում:	Լսարանային քննարկում:	Մասնակցություն լսարանային քննարկմանը: Կրթական իրավիճակների վերլուծություն:	<u>Ընթացքի գնահատում</u> Ճեպաթերթիկ: Համացանացային հարցում:
<u>Շարաթ 14</u> Հրեական լեզուներ: Եբրայերեն լեզվի պատմության համառոտ ակնարկ:	Լսարանային քննարկում:	Մասնակցություն լսարանային քննարկմանը: Կրթական իրավիճակների վերլուծություն:	<u>Ընթացքի գնահատում</u> Ճեպաթերթիկ: Համացանացային հարցում:
<u>Շարաթ 15</u> Սիոնիստական շարժման ծագումն ու ձևավորումը Արևելյան Եվրոպայում: Քաղաքական և կրոնական սիոնիզմ: Իսրայել պետության ստեղծումը կրոնական ընկալման համատեքստում:			<u>Վերջնարդյունքի գնահատում</u> Լսարանային շարադրության (էսսեի) կատարում:
<u>Շարաթ 16</u> Հուդայականություն և արդիականություն: Քննության արդյունքների վերլուծություն:	Հետքննական սեմինար:	Քննական արդյունքների ինքնավերլուծություն	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ-վերլուծություն
<u>Քննաշրջանի համապատասխան շարաթ</u>			<u>Վերջնարդյունքի գնահատում</u> Կուրսային նախագծերի պաշտպանություն:

6. Դասախոսությունների համառոտ բովանդակություն

Եբրայագիտության յուրաքանչյուր ոլորտ ուսումնասիրելիս նախ կներկայացվեն այդ ոլորտում կատարված վերջին ուսումնասիրությունների արդյունքները:

Շաբաթներ 1–3

- ✓ Կրոնական համակարգի հասկացությունը հրեական միջավայրում:
- ✓ Մովսեսի հնգամատյանը՝ Թորան, ինչպես նաև Հրեական աստվածաշնչի մյուս երկու գրքերը՝ Մարգարեները և Գրությունները որպես հրեական օրենքի և պատմության սկզբնաղբյուր:
- ✓ Հրեա ժողովրդի ծագումնաբանությունն ըստ ավանդական հուդայականության:

1. Sybil Sheridan, “Myth and history”, *Themes and Issues in Judaism*, Seth D. Kunin (ed.), Cassell, London and New York, 2000, pp. 81-110
2. John Bright, *A History of Israel*, Westminster John Knox Press, 2000, pp. 67-103
3. Elie Kedourie, *The Jewish World: Revelation, Prophecy and History*, Thames & Hudson, 2003, pp. 37-68
4. Jacob Neusner, *The Classics of Judaism*, Westminster John Knox Press, Louisville, Kentucky, 1995, pp. 11-53

Շաբաթներ 4-5

- ✓ Ելք Եգիպտոսից:
- ✓ Քանան երկրի գրավումը:
- ✓ Դատավորների ժամանակաշրջան:
- ✓ Երկու հրեական պետությունների ստեղծումը:
- ✓ Հրեա ժողովրդի ծագումնաբանությունն ըստ հնագիտական ուսումնասիրությունների:
- ✓ Աստվածաշնչյան ժամանակաշրջան:

1. Philip R. Davies, *In Search of 'ancient Israel'*, Continuum International Publishing Group, 1995, pp. 11-46
2. John Bright, *A History of Israel*, Westminster John Knox Press, 2000, pp. 133-143
3. John Bright, *A History of Israel*, Westminster John Knox Press, 2000, pp. 184-211

Շարաթներ 6-7

- ✓ Բաբելոնյան գերություն:
- ✓ Ետաստվածաշնչյան կամ Երկրորդ տաճարի ժամանակաշրջան:
- ✓ Հուդայականությունը և հելլենիզմը:
- ✓ Մաքաբեական իշխանության հաստատումն Իսրայելում:
- ✓ Մեռյալ ծովի ձեռագրեր:
- ✓ Ռաբունական գրականության ստեղծում:
- ✓ Քրիստոնեության մարտահրավերը հուդայականությանը:

1. Shaye J. D. Cohen, *The Beginnings of Jewishness: Boundaries, Varieties, Uncertainties*, University of California Press, 2001, pp. 25-68
2. Abraham Malamat, Haim Hillel Ben-Sasson, *A History of the Jewish People*, Harvard University Press, 1976, pp. 191-271, 277-295
3. Geza Vermes, *The Complete Dead Sea Scrolls in English*, Allen Lane, The Pinguin Press, 1997, 1-67

Շարաթներ 8-10

- ✓ Տարագրության ժամանակաշրջան:
- ✓ Հրեաները քրիստոնեության և իսլամի համատեքստում:
- ✓ Հնագույն Իսրայելի կրոնական պատկերացումներն ի հակադրություն դասական ռաբունական համակարգի:
- ✓ «Հրեական ոսկեդար» և թարգմանչական գործունեություն արաբական տիրապետության ժամանակաշրջանում:

1. Abraham Malamat, Haim Hillel Ben-Sasson, *A History of the Jewish People*, Harvard University Press, 1976, pp. 403-407
2. Jacob Rader Marcus, Marc Saperstein, *The Jew in the Medieval World: A Source Book, 315-1791*, Hebrew Union College Press, 1999, pp. 22-31, 38-46
3. Elie Kedourie, *The Jewish World: Revelation, Prophecy and History*, Thames & Hudson, 2003, pp. 161-168, 178-191

Շարաթներ 11-13

- ✓ Հրեական փիլիսոփայական մտքի հիմնական ուղղություններն ու շմիջնադարում:
- ✓ Հրեական խորհրդապաշտություն: Կաբալան հրեական կրոնական ավանդույթի համատեքստում:
- ✓ Հրեական լուսավորչական շարժման ծագումն ու ձևավորումը Արևելյան Եվրոպայում:

1. Abraham Malamat, Haim Hillel Ben-Sasson, *A History of the Jewish People*, Harvard University Press, 1976, pp. 448-456
2. Byron L. Sherwin, *Kabbalah: An Introduction to Jewish Mysticism*, Rowman & Littlefield, 2006, pp. 13-47
3. Shmuel Feiner, Chaya Naor, *The Jewish Enlightenment*, University of Pennsylvania Press, 2011, pp. 1-19

Շարաթներ 14-16

- ✓ Հրեական լեզուներ:
- ✓ Եբրայերեն լեզվի պատմության համառոտ ակնարկ:
- ✓ Սիոնիստական շարժման ծագումն ու ձևավորումը Արևելյան Եվրոպայում:
- ✓ Քաղաքական և կրոնական սիոնիզմ:
- ✓ Իսրայել պետության ստեղծումը կրոնական ընկալման համատեքստում:
- ✓ Հուդայականություն և արդիականություն

1. Seth D. Kunin, “Sacred place”, *Themes and Issues in Judaism*, Seth D. Kunin (ed.), Cassell, London and New York, 2000, pp. 22-56
2. Хаим Рабин, “Краткая история иврита”, *Иврит - язык возрожденный*, Иерусалим, 1984, стр. 11-65
3. Alan Dershowitz, *The Case for Israel*, John Wiley & Sons Inc., Canada, 2003, pp. 13-63
4. Martin Gilbert, *Israel: A History*, London-New York-Toronto-Sidney-Auckland, 1998, pp. 3-16, 100-153
5. Yaakov Malkin, *Judaism Without God?: Judaism As Culture, Bible As Literature*, Translated by Shmuel Gertel, Gorgias Press, 2009, pp.13-70

7. Հրացուցիչ գրականության ցանկը

5. Philip R. Davies, *In Search of 'ancient Israel'*, Continuum International Publishing Group, 1995, pp. 11-46
6. Abraham Malamat, Haim Hillel Ben-Sasson, *A History of the Jewish People*, Harvard University Press, 1976, pp. 191-271, 277-295
7. Shaye J. D. Cohen, *The Beginnings of Jewishness: Boundaries, Varieties, Uncertainties*, University of California Press, 2001, pp. 25-68
8. Jacob Rader Marcus, Marc Saperstein, *The Jew in the Medieval World: A Source Book, 315-1791*, Hebrew Union College Press, 1999, pp. 22-31, 38-46
9. Sybil Sheridan, “Myth and history”, *Themes and Issues in Judaism*, Seth D. Kunin (ed.), Cassell, London and New York, 2000, pp. 81-110
10. Seth D. Kunin, “Sacred place”, *Themes and Issues in Judaism*, Seth D. Kunin (ed.), Cassell, London and New York, 2000, pp. 22-56
11. Sh. Avineri, *The Making of Modern Zionism: The Intellectual Origins of the Jewish State*, New York, 1981
12. Martin Gilbert, *Israel: A History*, London-New York-Toronto-Sidney-Auckland, 1998
13. Joel. M. Hoffman, *In the Beginning: A short History of the Hebrew Language*, New York – London, 2004
14. Paul Johnson, *A History of the Jews*, London, 1995
15. J. Klier, *Imperial Russia's Jewish Question 1855-1881*, Cambridge University Press, 1995
16. Sh. Lambroza, J. Klier (ed.), *Pogroms: Anti-Jewish Violence in Modern Russian History*, Cambridge University Press, 2004

17. Steven M. Lowenstein, *The Berlin Jewish Community: Enlightenment, Family, and Crisis 1770-1830*, Oxford University Press, US, 1994
18. J. Fellman, *The Revival of a Classical Tongue: Eliezer Ben Yehuda and the Modern Hebrew Language*, The Hague, Mouton, 1973
19. Geza Vermes, *The Complete Dead Sea Scrolls in English*, Allen Lane, The Pinguin Press, 1997
20. Angel Saenz-Badillos, *A History of the Hebrew Language*, Translated by John Elwolde, Cambridge University Press, 1993
21. Хаим Рабин, “Краткая история иврита”, *Иврит - язык возрожденный*, Иерусалим, 1984, стр. 11-65
22. Siegfried Herrmann, *A history of Israel in Old Testament times*, Fortress Press, 1981
23. John Bright, *A History of Israel*, Westminster John Knox Press, 2000
24. Elie Kedourie, *The Jewish World: Revelation, Prophecy and History*, Thames & Hudson, 2003
25. Jacob Neusner, *The Classics of Judaism*, Westminster John Knox Press, Louisville, Kentucky, 1995
26. Alan Dershowitz, *The Case for Israel*, John Wiley & Sons Inc., Canada, 2003
27. Yaakov Malkin, *Judaism Without God?: Judaism As Culture, Bible As Literature*, Translated by Shmuel Gertel, Gorgias Press, 2009
28. Byron L. Sherwin, *Kabbalah: An Introduction to Jewish Mysticism*, Rowman & Littlefield, 2006
29. Shmuel Feiner, Chaya Naor, *The Jewish Enlightenment*, University of Pennsylvania Press, 2011

8. Ընթացիկ (միջանկյալ) և եզրափակիչ քննությունների բովանդակությունը և միավորների սանդղակը

Ընթացիկ (միջանկյալ) քննությունների հիմնական նպատակը՝ դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատումն է: Դասընթացի միջանկյալ գնահատումների համակարգը նախատեսում է երկու քննության անցկացում, որոնցից յուրաքանչյուրի համար՝ համալսարանում գործող կարգին համապատասխան նախատեսված է 4 միավորի սանդղակ: Եզրափակիչ քննության արդյունքը գնահատվում է 10 միավորի սանդղակով: Քննության հիմնական նպատակը՝ դասընթացի կրթական վերջնարդյունքին հասնելու աստիճանի

գնահատումն է: Ուսանողի մասնակցության աստիճանը դասընթացին գնահատվում է 2 միավորի սանդղակով: Գնահատման այդ բաղադրիչն ենթադրում է ուսանողի լսարանային և համացանցային մասնակցության աստիճանի չափում:

Առաջին միջանկյալ քննությունը

Առաջին միջանկյալ քննությունը անց է կացվում դասընթացի 7-րդ շաբաթվա ընթացքում և նախատեսում ուսումնասիրած գրականության քննադատական վերլուծության նախապատրաստում և բանավոր ներկայացում լսարանում: Գնահատման ընթացքը, ըստ այդմ, ներառում է երկու փուլ՝ (ա) 2–3 էջի սահմաններում շարադրված նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների) գնահատում դասախոսի կողմից քննությանը նախորդող շաբաթվա ընթացքում. (բ) անհատական բանավոր ելույթների գնահատում ուսանողների կողմից:

Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝

Ա. Նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների) գնահատում
(գնահատումը կատարվում է դասախոսի կողմից)

Գնահատման չափանիշները	Գնահատման ստանդարտները			
	0,5	1	1,5	2
Բովանդակույթ ունը և առաջացած հարցերի պատասխանները	<ul style="list-style-type: none"> Կոնսպեկտի բովանդակությունը չի համապատասխանում նյութին Տրված չեն հանգուցաբառերը Ուսանողը չի կարող հստակ պատասխանել 	<ul style="list-style-type: none"> Կոնսպեկտի բովանդակությունը մասամբ համապատասխանում է նյութին Տրված չեն հանգուցաբառերը Ուսանողը որոշ 	<ul style="list-style-type: none"> Կոնսպեկտի բովանդակույթ ունը հիմնականում համապատասխանում է նյութին Տրված են հանգուցաբառերը Ուսանողը 	<ul style="list-style-type: none"> Կոնսպեկտի բովանդակույթ ունը հստակ համապատասխանում է նյութին Տրված չեն հանգուցաբառերը Ուսանողը հստակ

	առաջացած հարցերին	չափով կարողացել է պատասխանել առաջացած հարցերին	ընդհանուր առմամբ կարողացել է պատասխանել առաջացած հարցերին	պատասխանել է առաջացած հարցերին
--	-------------------	--	---	--------------------------------

Բ. Բանավոր ելույթների փոխգնահատում

(գնահատումը կատարվում է դասընկերների կողմից՝ գրանցվում է թվարկված չափանիշների գնահատումների միջինացված թվանիշը)

<i>Գնահատման չափանիշները</i>	<i>Գնահատման ստանդարտները</i>			
	<i>0 (անբավարար)</i>	<i>1 (բավարար)</i>	<i>1,5 (լավ)</i>	<i>2 (գերազանց)</i>
<i>Խոսքի տրամաբանական կառուցվածքը</i>	Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը , քանի որ մտքերի տրամաբանական հաջորդականություն չկա:	Լսարանը դժվարանում է հետևել մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբանական շղթան պարբերաբար ընդհատվում է:	Ուսանողի մտքերն աչքի են ընկնում տրամաբանական հաջորդականությամբ, և լսարանը կարողանում է հետևել խոսքաշարին:	Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կառուցվածք, հետաքրքիր ընթացք: Լսարանը ներգրավված և հետաքրքրված է:
<i>Առարկայի իմացությունը</i>	Ուսանողի իմացությունը թերի է, չի կարողանում հարցերին	Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատասխանել	Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխաններ	Ուսանողն ունի հիմնարար գիտելիքներ, տալիս է սպառիչ պատասխաններ,

	սպառիչ պատասխանել:	միայն տարրական հարցերին:	ը, սակայն չի կարողանում հիմնավորել սեփական պատասխանները:	որոնց հաջորդում են լուրջ մեկնաբանություններ:
Կապը լսարանի հետ	Ուսանողի զեկույցն անկենդան է, բացակայում է կապը լսարանի հետ:	Ուսանողը հիմնականում ընթերցում է զեկույցը, ժամանակ առ ժամանակ փորձում կապ հաստատել լսարանի հետ:	Ուսանողը հիմնականում պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ օգտվում իր գրառումներից:	Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ, հազվադեպ օգտվում իր գրառումներից:

Երկրորդ միջանկյալ քննությունը

Երկրորդ միջանկյալ քննությունն անց է կացվում դասընթացի 15-րդ շաբաթվա ընթացքում և նախատեսում է լսարանային շաբադրության (էսսեի) կատարում՝ տրված անհատական հարցադրումների շուրջ:

Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝

1. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	
<i>Շարադրանքը համապատասխանում է տրված հարցադրմանը</i>	<i>Շարադրանքը չի համապատասխանում հարցադրմանը</i>
2. ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ	
<i>Փաստարկները տրամաբանորեն կազմակերպված են</i>	<i>Փաստարկները հետևողական չեն, տրամաբանորեն փոխկապակցված չեն</i>
3. ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
<i>Ինքնուրույն և ստեղծագործական է</i>	<i>Ինքնուրույնության և ստեղծագործականության պակաս կա</i>

4. ՈՃԸ	
<i>Ակադեմիական ոճը պահպանված է</i>	<i>Ակադեմիական ոճը պահպանված չէ</i>
5. ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ	
<i>Հստակ և լավ ձևավորված աշխատանքը</i>	<i>Անփույթ և դժվար ընթեռնելի աշխատանք</i>
6. ԾԱՎԱԼԸ	
<i>Ողջամիտ ծավալ</i>	<i>Չափազանց երկար/կարճ աշխատանք է</i>
7. ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	
<i>Քերականական սխալներ չկան</i>	<i>Շատ են քերականական սխալները</i>
8. ՀՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	
<i>Մեջբերելիս հղումներ են արված</i>	<i>Մեջբերելիս հղումներ չկան</i>

Յուրաքանչյուր չափանիշի կատարման առավելագույն արժեքը 0,5 միավոր է:

Եզրափակիչ քննությունը

Եզրափակիչ քննությունն անցկացվում է քննաշրջանի ընթացքում՝ ուսանողների, դասախոսի և ֆակուլտետի ուսումնական գրասենյակի (դեկանատ) համաձայնեցմամբ նշանակված օրը: Այն նախատեսում է կուրսային նախագծերի պաշտպանություն: Պաշտպանությանը ընթացակարգը և ժամակարգը կարգավորվում են հետևյալ չափանիշներով՝

(ա) խմբի կողմից նշանակված հիմնական և օժանդակ խոսնակների բանավոր ներկայացում պատկերների լուսարկման ուղեկցմամբ.

(բ) այլ խմբերի մասնակիցների և պաշտպանության՝ ամբիոնի կողմից նշանակված հանձնախմբի անդամների հարցերին պատասխաններ:

Գնահատման չափանիշներ և ստանդարտներ՝

Ա. Խմբային աշխատանքի ներկայացման գնահատում

(գնահատումը կատարվում է պաշտպանության հանձնախմբի անդամների կողմից)

<i>Գնահատման չափանիշները</i>	<i>Գնահատման ստանդարտները</i>		
	<i>Ենթակա է զարգացման (0 միավոր)</i>	<i>Բավարար (1 միավոր)</i>	<i>Օրինակելի (2 միավոր)</i>
<i>Թիմային աշխատանքի ներկայացումը</i>	<ul style="list-style-type: none"> • Ելույթն անկազմակերպ էր, չկար հստակ դերաբաշխում: • Մեկ կամ մի քանի հոգի իրենց վրա վերցրին հիմնական պատասխանատվությունը: • Անհատական ելույթների միջև բացակայում էր տրամաբանական կապը: 	<ul style="list-style-type: none"> • Թիմում տեղի ունեցավ սխալ դերաբաշխում, սակայն դա մեծ ազդեցություն չունեցավ ընթացքի վրա: • Թիմի որոշ անդամներ մյուսներին արտահայտվելու հնարավորություն չտվեցին: • Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին միմյանց, սակայն որոշ դեպքերում կապը հստակ չէր: 	<ul style="list-style-type: none"> • Արդյունավետ օգտագործվեց ելույթին հատկացված ողջ ժամանակը: • Ելույթ ունեցողը իր թիմի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն տվեց: • Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին իրար, կապը խզվեց միայն որոշ դեպքերում:
<i>Բովանդակությունը</i>	<ul style="list-style-type: none"> • Փաստերում և օրինակներում բացակայում էր մանրամասնությունը, օրինակները անհամապատասխան 	<ul style="list-style-type: none"> • Փաստերն ու օրինակները հիմնականում մանրամասն էին, ճշգրիտ և համապատասխան, 	<ul style="list-style-type: none"> • Փաստերը կամ օրինակները մանրամասն էին, ճշգրիտ և համապատասխան: • Տեսությունները, որոնց

	<p>ն էին և անհասկանալի:</p> <ul style="list-style-type: none"> • Այն տեսությունները, որոնց հղումներ էր կատարված, նկարագրված էին ոչ հստակ և անհամապատասխանորեն էին օգտագործված, կամ դրանց ընդհանրապես հղում արված չէր: • Ոչ մի տրամաբանական կապ չկար վերլուծությունների, քննարկումների և օրինակների, փաստերի և տեսությունների միջև: 	<p>սակայն կային վրիպումներ:</p> <ul style="list-style-type: none"> • Տեսություններին հղումներ արված էին, բայց դրանք կամ ոչ հստակ էին նկարագրված կամ անհամապատասխան ձևով օգտագործված: • Վերլուծությունների, քննարկումների և եզրակացությունների միջև կապն ակնհայտ չէր կամ ենթադրվում էր, սակայն ճշգրտորեն կապված չէին օրինակների, փաստերի և տեսությունների հետ: 	<p>հղում էր արված, հստակ նկարագրված էին և համապատասխան ձևով օգտագործված:</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծությունները, քննարկումները և եզրակացությունները ճշգրտորեն կապված էին օրինակների, փաստերի և տեսությունների հետ:
--	--	---	--

Բ. Ուսանողի՝ խմբում աշխատելու արդյունավետության փոխզնահատում (զնահատումը կատարվում է խմբի մասնակիցների կողմից)

Գնահատման չափանիշները	Գնահատման ստանդարտները		
	Ենթակա է զարգացման (0 միավոր)	Բավարար (1 միավոր)	Օրինակելի (2 միավոր)
Թիմային աշխատանք	<ul style="list-style-type: none"> • Մասնակցություն չի ունեցել 	<ul style="list-style-type: none"> • Մասնակցել է առաջադրանքի 	<ul style="list-style-type: none"> • Առաջարկություններ է ներկայացրել

<p>քի սկզբնական և փուլ</p>	<p>առաջադրանքի կատարման բովանդակության, ընթացքի և կարգի վերաբերյալ առաջարկություններ ի քննարկմանը:</p>	<p>կատարման բովանդակության, ընթացքի և կարգի վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը:</p>	<p>առաջադրանքի կատարման բովանդակության, ընթացքի և կարգի վերաբերյալ:</p>
<p>Թիմային աշխատանքի կատարման և փուլ</p>	<ul style="list-style-type: none"> • Չի մասնակցել առաջադրանքը կազմող խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ առաջարկություններ ի քննարկմանը: • Չի մասնակցել խմբի այլ անդամների առաջարկությունների (վարկածների, գաղափարների) քննարկումներին/բանավեճերին): 	<ul style="list-style-type: none"> • Մասնակցել է առաջադրանքը կազմող խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը՝ կարծիք արտահայտելով: • Մասնակցել է խմբի այլ անդամների առաջարկությունների (վարկածների, գաղափարների) քննարկումներին/բանավեճերին): 	<ul style="list-style-type: none"> • Առաջադրանքը կազմող խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ հանդես է եկել սեփական դիրքորոշմամբ: • Քննարկել/բանավիճել է խմբի այլ անդամների առաջարկությունները (վարկածները, գաղափարները):
<p>Ընդհանուր կազմակերպական չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Չի պահպանել սահմանված աշխատակարգը և շեղել է խմբի աշխատանքը դեպի ոչ արդյունավետ քննարկումներ: 	<ul style="list-style-type: none"> • Պահպանել է սահմանված աշխատակարգը և չի ծավալել ոչ արդյունավետ քննարկումներ: 	<ul style="list-style-type: none"> • Հետևել է աշխատակարգի պահպանմանը և դադարեցրել ոչ արդյունավետ քննարկումները: